

Մատենագիտության և գրադարանագիտության բաժին

Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժինը ստեղծվել է 1933թ. փետրվարի 19-ին, թիվ 15 հրամանով՝ տնօրեն Ազատ Մարտիկյանի անմիջական կարգադրությամբ: Բաժնի գործառույթները սերտորեն առնչվում են գիտական, հետազոտական աշխատանքի հետ՝ նպաստելով Ազգային գրադարանում պահպանվող ազգային հարստությունը հանրությանը մատուցելու կարևորագույն գործին: Բաժնի կառուցվածքում առանձնացված է 3 ենթաբաժին՝

1. Հայագիտական և երկրագիտական քարտարանների տեղեկատվության ենթաբաժին

2. Հայ գրքի մատենագիտության և սփյուռքահայ մամուլի ենթաբաժին

3. Գրադարանագիտության և տեղակատու մատենագիտության ենթաբաժին

Հայագիտական և երկրագիտական քարտարանների տեղեկատվության ենթաբաժնում մշակվում և քարտագրվում են Հայաստանի, նրա մարզերի, հայ ժողովրդի, սփյուռքահայ գաղթօջախների մասին պարբերական մամուլում և ժողովածուներում տպագրված հոդվածները: Ենթաբաժնում է գտնվում նաև անհատական քարտարանը, որը պարունակում է հայ մշակույթի նշանավոր գործիչների՝ պարբերական մամուլում տպագրված ստեղծագործությունները, թարգմանությունները, հարցազրույցները:

Հայ գրքի մատենագիտության և սփյուռքահայ մամուլի ենթաբաժնում կազմվել և հրատարակվել են «Հայ գիրքը» մատենագիտության 5 հատորները, որոնք պարունակում են հայերեն տպագիր առաջին գրքերից մինչև 1930 թ. հրատարակված գրքերի, նրանց բովանդակության, տպագրության և ներկայում գտնվելու վայրի, ինչպես նաև ֆիզիկական վիճակի մասին արժեքավոր տեղեկատվություն: 2016 թ. հրատարակվելու է վեցերորդ հատորը, ուր ներկայացված են 1931-1940 թվականներին հրատարակված հայատառ գրքերը: Այս ենթաբաժնում մշակվում են նաև սփյուռքահայ հայալեզու և այլալեզու մամուլի ու ժողովածուների հայագիտական հոդվածները:

Գրադարանագիտության և տեղակատու մատենագիտության ենթաբաժնում մշակվում և քարտագրվում են աշխարհի տարբեր երկրների մասին պարբերական մամուլում և ժողովածուներում տպագրվող հոդվածները: Տեղեկատու գրականության ընթերցասրահն ունի հարուստ առձեռն ֆոնդ՝ 15.340 միավոր (գրքեր, տեղեկագրեր, տարեգրեր):

Բաժնում ընթերցողներին տրամադրվում է բանավոր տեղեկատվություն՝ ըստ իրենց հարցման և ուղղորդում, թե ինչպես կարելի է օգտվել պահանջված աղբյուրից:

Համապատասխան հրահանգի դեպքում կազմվում է գրավոր տեղեկանք՝ ըստ թեմայի: Գրավոր տեղեկանքի մեջ նշվում է թեման, աղբյուրների քանակը, տեղեկանքը կազմողի անունը, կազմելու օրը, ամիսը, տարեթիվը և պատվիրատուի անունը: Տեղեկանքի մի օրինակը արխիվացվում և պահվում է բաժնում:

Հաշվի առնելով ժամանակակից տեղեկատվական դաշտի զարգացումները՝ 2013 թվականից Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող հոդվածները մշակվում են էլեկտրոնային ձևով՝ ստեղծելով «Մամուլի հոդվածներ» էլեկտրոնային շտեմարանը: Greenstone ծրագրի միջոցով կատարվում են հոդվածների գրառումները, տրվում է համապատասխան մամուլի էլեկտրոնային կայքը՝ հոդվածը ընթերցելի դարձնելու համար:

Բաժինը ստեղծում է տարաբնույթ թեմատիկ էլեկտրոնային շտեմարաններ, որոնցից են՝ «Արև» օրաթերթ», «Հայ տպագրության 400-ամյակ», «Հայ տպագրության 500-ամյակ», «Տպարաններ և հրատարակչություններ», «Արցախյան շարժում», «Հայերի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին», «Հայոց ցեղասպանությունը օտարալեզու մամուլում» և այլն: Սքանավորվում և թվայնացվում են համապատասխան նյութերը, ապա կատարվում է նյութի մատենագիտական նկարագրություն, տեղադրվում է PDF տարբերակը՝ նյութը ընթեռնելի դարձնելու նպատակով: Եթե հոդվածն ունի էլեկտրոնային աղբյուր, ապա տեղադրվում է համապատասխան աղբյուրը՝ պահպանելով հեղինակային իրավունքը: Առանձնահատուկ է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանը, ուր ներառվում են հայերեն, հայատառ, ինչպես նաև հայերեն էլից տվյալներ պարունակող գրքերը: Էլեկտրոնային շտեմարանները հասանելի են <http://www.nla.am/> հասցեով:

Տարվա կտրվածքով բաժնում ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր գրադարանների գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ տարեվերջին առանձին գրքույկով ներկայացնելով դրանք:

Յուրաքանչյուր տարի հրատարակվում է «Հիշարժան տարեթվեր» գրքույկը՝ ներկայացնելով հաջորդ տարվա ակնառու իրադարձություններն ու հոբելյանները:

Էլեկտրոնային ձևաչափով կայքում դրվում են «Նոր գրքեր» հայերեն և օտարալեզու գրքույկները՝ ներկայացնելով Հայաստանի ազգային գրադարան մուտք գործած նոր գրքերի ցանկերը:

1937 թվականից բաժնում կազմվում և հրատարակվում են արժեքավոր մատենագիտություններ, հանձնարարական ցանկեր, տեղեկատու ցանկեր, մեթոդական ձեռնարկներ, հիշարժան տարեթվերի օրացույցներ և այլն: Ընթացքի մեջ են հետևյալ մատենագիտությունները՝

1. «Հայ գիրք: 1931-1940»: Մատենագիտություն / Կազմ.՝ Ս. Գրիգորյան
2. «Մաղաքիա Օրմանյան»: Կենսամատենագիտություն / Կազմ.՝ Ս. Գրիգորյան
3. «Ավետիս Ահարոնյան»: Կենսամատենագիտություն / Կազմ.՝ Ա. Դավթյան
4. «Եղիշե Չարենց»: Կենսամատենագիտություն / Կազմ.՝ Ա. Դավթյան, Օ. Աղայան
5. «Հովհաննես Այվազովսկի»: Կենսամատենագիտություն / Կազմ.՝ Ռ. Թումասյան, Ս. Շիրվանյան, Լ. Վարդանյան
6. «Պայան գերդաստանը»: Պոլսահայ ճարտարապետ Գրիգոր Պայանի ծննդյան 250-ամյակի առթիվ: Մատենագիտություն / Կազմ.՝ Ա. Դավթյան

Բաժնում կատարվում են թարգմանություններ՝ տարաբնույթ միջոցառումների, Գրատպության թանգարանի համար, կազմակերպվում են սեմինար-քննարկումներ, ցուցադրություններ, հանդիպումներ, շնորհանդեսներ: Անցկացվում են մատենագիտական տեսություններ, հրատարակությունների էլեկտրոնային տարբերակների շնորհանդեսներ:

Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժինը հավատարիմ է մնում իր առաքելությանը՝ ամբարած հայագիտական և ոչ հայագիտական բնույթի ողջ տեղեկատվությունը հասանելի դարձնել ընթերցող հասարակությանը ավանդական և ժամանակակից բոլոր հնարավոր տարբերակներով: